1) Ախտայի հաշտարար բաժանմունք և քննիչական մաս Ներքին Ախտայ գիւղում:

2) Ղոխբուլաղի հաշտարար բաժանմունք և քննիչական մաս, կենտրոնն ընդունելով Երևան քաղաքը, և

3) Ղամարլուի հաշտարար բաժանմունք և քննիչական մաս Ղամարլու գիւղում:

III. Էջմիածնի գաւառում հաստատւում են երեք հաշտարար բաժանմունք և նոյնքան քննիչական մասեր.

1) Էջմիածնի հաշտարար բաժանմունք և քննիչական մաս Վաղարշապատ գիւղում.

2) Ապարանի հաշտարար բաժանմունք և քննիչական մաս Ալիքուշաք գիւղում և

3) Ղուրդուղուլի հաշտարար բաժանմունք և քննիչական մաս Ղուրդուղուլի գիւղում:

IV. Սուրմալուի գաւառում հաստատւում են երկու հաշտարար բաժանմունք և նոյնքան քննիչական մասեր:

1) Սուրմալուի հաշտարար բաժանմունք և քննիչական մաս Իգդիր գիւղում և

2) Կողբի հաշտարար բաժանմունք և քննիչական մաս Կողբ գիւղում:

V. Ղարաքիլիսայի գաւառում՝ Ղարաքիլիսայի հաշտարար բաժանմունք և քննիչական մաս Մեծ Ղարաքիլիսա գիւղում:

VI. Դիլիջանի (Քարւանսարայի) գաւառում հաստատւում են երկու հաշտարար բաժանմունք և նոյնքան քննիչական մասեր.

1) Դիլիջանի հաշտարար բաժանմունք քննիչական մաս Դիլիջան գիւղում և

2) Քարւանսարայի հաշտարար բաժանմունք և քննիչական մաս Քարւանսարա գիւղում:

VII. Լոռիի (Զալալ-Օղլու) գաւառում՝ Լոռիի հաշտարար բաժանմունք և քննիչական մաս Զալալ-Օղլի գիւղում:

VIII. Նոր-Բայազէտի գաւառում հաստատւում են՝ մի հաշտարար բաժանմունք, մի քննիչական մաս և մի քննիչ հաշտարար բաժանմունք.

1) Նոր-Բայազէտի հաշտարար բաժանմունք և քննիչական մաս Նոր-Բայազէտ քաղաքում.

2) Բասարգեչարի քննիչահաշտարար բաժանմունք Բասարգեչար գիւղում և

3) Ղարանլուղի քննիչական մաս Ղարանլուղ գիւղում:

IX. Շարուրի գաւառում հաստատւում է մէկ հաշտարար բաժանմունք և մէկ քննիչական մաս Բաշնորաշէն գիւղում:

X. Դարալագեազի գաւառում Դարալագեազի հաշտարար բաժանմունք և քննիչական մաս Քէչիշ-քեանդ գիւղում:

XI. Նախիջևանի գաւառում հաստատւում են երկու հաշտարար բաժանմունք և նոյնքան քննիչական մասեր.

1) Նախիջևանի հաշտարար բաժանմունք և քննիչական մաս Նախիջևան քաղաքում և

2) Օրդուբաթի հաշտարար բաժանմունք և քննիչական մաս Օրդուբաթ քաղաքում: